«2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ
Ի ՓՈՒԼ

«2021թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 12-րդ շրջանի ընտրական առաջին փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Հակասություններ և բացահայտումներ», «Գրագիտություն և իրազեկվածություն», ինչպես նաև հոգեմտածողություն առաջադրանքներից:

Հարցաշարի 2-րդ, 4-րդ և 5-րդ հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 3 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր, իսկ 1-ին և 3-րդ հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 13 միավոր:

Խնդիրը ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 15 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

«Գրագիտություն և իրազեկվածություն» առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր:

«Հոգեմտածողություն» առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների թիվը կազմում է 48 միավորը:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքներից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2021թ. մարտի 31-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2021թ. ապրիլի 1-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2021Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. **Աշխատողը հայրության արձակուրդից հետ է կանչվել: Հրամանում, որ արտահայտությունը պետք է գրել (գտնել սխալ պատասխանները)՝**

   ա) կողմերի համաձայնությամբ հայրության արձակուրդը տրամադրել տվյալ աշխատանքային տարում կողմերի համաձայնությամբ սահմանված մեկ այլ ժամանակ.

   բ) միացնել ամենամյա արձակուրդին.

   գ) «ա» և «բ» պատասխանները սխալ են: Հայրության արձակուրդի չօգտագործված մասը հաշվի կառնվի միայն վերջնահաշվարկի ժամանակ:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, եթե սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերը համապատասխանաբար ցածր են տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձից կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափից, ապա միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերի փոխարեն համապատասխանաբար հիմք է ընդունվում տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձը կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը: Ո՞ր դեպքում կարող է հաշվարկված միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերը համապատասխանաբար ցածր լինեն տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձից կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափից:

Հարցը ներկայացվում է առանց ճիշտ և սխալ տարբերակների: Տվեք Ձեր ճիշտ պատասխանը:

Պատասխան

Այն դեպքում, երբ միջին ամսական աշխատավարձի հաշվարկման համար անհրաժեշտ վերջին 12 ամսյա ժամանակահատվածի մեծ մասը համընկնում է նախորդ տարվան և եթե նախորդ տարվա նվազագույն ամսական աշխատավարձը փոքր է եղել հաջորդ տարվա (կամ, որ նույնն է թե միջին ամսական աշխատավարձ հաշվարկելու տարվա) նվազագույն ամսական աշխատավարձից:

3. **Հարկադիր պարապուրդում գտնվող աշխատողին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարվել է միջին աշխատավարձ: Աշխատողը պահանջել է հաշվարկված միջին ամսական աշխատավարձի նկատմամբ կիրառել գիշերային աշխատանքի համար հավելում, քանի որ ըստ աշխատանքային պայմանագրի նա աշխատում է միայն գիշերային աշխատաժամանակի ռեժիմով: Գործատուն մերժել է աշխատողի պահանջը, ինչի պատճառով աշխատողի և գործատուի միջև առաջացել է վեճ: Համաձայնության չգալուց հետո աշխատողը դիմել է դատարան վեճն իր օգտին լուծելու հայցով: Ի՞նչ եք կարծում, ինչ վճիռ կկայացնի դատարանը (գտնել սխալ պատասխանը)՝**

<u>ա) դատարանը կբավարարի աշխատողի հայցը.</u>

բ) դատարանը կմերժի աշխատողի հայցը.

գ) դատարանը կկայացնի արդարացի որոշում:

4. Ինչպես հայտնի է, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց կազմակերպված հանցավոր խմբերում հատուկ առաջադրանքներ կատարելու ժամանակահատվածը՝ աշխատանքային ստաժում մեկ օրվա ծառայությունը հաշվարկվում է երկու օր: Հինգ տարվա օպերատիվ-հետախուզական գործունեության աշխատանքային ստաժ ունեցող անձին, քանի օր առաջ պետք է ծանուցել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին՝

ա) 14 օր.

բ) 35 օր.

<u>գ) 42 օր:</u>

5. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միևնույն անձը միաժամանակ չի կարող ներկայացնել աշխատողների և գործատուների շահերն ու պաշտպանել դրանք: Իրավաբանը, որը հանդիսանում է տվյալ ընկերության արհմիութենական

կազմակերպության անդամ կարո՞ղ է այլ ընկերությունների հետ հարաբերություններում ներկայացնել իր ընկերության և աշխատողների շահերն ու պաշտպանել դրանք՝ միաժամանակ.

ա) կարող է, իսկ ինչո՞ւ չպետք է կարողանա.

բ) չի կարող, քանի որ նրա գործողությունները կհակասեն ՀՀ աշխատանքային օրենդրությանը.

գ) եթե կարողանա սխալ կլինի, իսկ եթե չկարողանա ճիշտ կլինի:

«2021Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Աշխատողը դիմել է դատարան՝ 4 ամսվա չվճարված աշխատավարձը և դրա հետևանքով բաց թողնված օգուտը գործատուից պահանջելու հայցով՝ նշելով, որ եթե գործատուն ժամանակին վճարած լիներ աշխատավարձը, ապա նա այն որպես ավանդ ներդրում կաներ որևէ բանկում և կստանար համապատասխան տոկոսաչափով փոխհատուցում: Սակայն նա զրկված է եղել այդ հնարավորությունից՝ աշխատավարձը ժամանակին չստանալու պատճառով: Ո՞ր դեպքում դատարանը կբավարարի աշխատողի հայցը:

Հարցը ներկայացվում է առանց ճիշտ և սխալ տարբերակների: Տվեք ճիշտ պատասխանը:

Պատասխան՝

Դատարանը աշխատողի հայցը կբավարարի այն դեպքում, երբ աշխատողը դատարանին ներկայացնի մինչև աշխատավարձի ուշանալու առաջին ամիսը նախկինում ստացված աշխատավարձի գումարները բանկում ներդնելու մասին ապացուցող փաստաթղթեր:

«2021Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ
«ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ» ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածում առկա է բացթողում: Նրանում տեղ չի գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի մեկ այլ հոդվածում սահմանված իրավակարգավորումը:Գտեք այն և ուժեղացրեք 161-րդ հոդվածը: Նա դրա կարիքն ունի:

Պատասխան

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվում է, որ արտաժամյա չի համարվում կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց՝ սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը: Այդ պաշտոնների ցանկը սահմանվում է ներքին կարգապահական կանոններով: Չնայած այն հանգամանքին, որ 144-րդ հոդվածի 5-րդ մասում ուղիղ տեքստով չի սահմանվում, որ ղեկավար պաշտոնատար անձինք աշխատում են չնորմավորված աշխատանքային ռեժիմով, սակայն դա բխում է աշխատանքի բնույթից, հետևաբար 161-րդ հոդվածում պետք է ավելացնել հետևյալ արտահայտությունը՝

Հոդված 161. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը

1. Ամենամյա լրացուցիչ արձակուրդ տրամադրվում է՝

1) աշխատանքի վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողներին.

2) չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին.

3) հատուկ բնույթի աշխատանքներում աշխատողներին:

առաջարկություն

4) Սույն օրենսգրքով սահմանված դեպքերում

2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«2021Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ
«ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «,» կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա նշված պայմանների կիրառման համար ի՞նչ կանոններ են գործում:

Պատասխան

Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

«2021Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ I ՓՈՒԼԻ
«ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Երկու ընկերներ զրուցում են: Նրանցից մեկը մյուսին ասում է.

- ես իմ աշխատանքը շատ-շատ եմ սիրում:

Մյուսը հակադարձում է ընկերոջը և պատասխանում.

- Իսկ ես իմ աշխատանքը շատ քիչ չեմ սիրում:

Կողմնորոշեք ընկերոջը: Ի՞նչ է ուզում ասել երկրորդ ընկերը:

Մեկնաբանեք այն և տվեք Ձեր եզրակացությունը, չէ որ ցանկանում եք դառնալ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչը:

Պատասխան

Եթե *«ես իմ աշխատանքը շատ քիչ չեմ սիրում»* արտահայտությունից, մտովի հեռացնենք *«շատ»* բառը, կստացվի *«ես իմ աշխատանքը քիչ չեմ սիրում»* արտահայտությունը, ինչը նշանակում է *«ես իմ աշխատանքը շատ եմ սիրում»:* Եթե դրան ավելացնենք մի կողմ դրած *«շատ»* բառը, ապա կստացվի հետևյալ արտահայտությունը՝ *«ես իմ աշխատանքը շատ-շատ եմ սիրում»:*

Հետևաբար՝ *«ես իմ աշխատանքը շատ քիչ չեմ սիրում»* արտահայտությունը նշանակում է *«ես իմ աշխատանքը շատ-շատ եմ սիրում»:*